Հավելված
ՀՀ փոխվարչապետի N 505 - Ա
որոշման

«ՎԵՐԱԿԱՆԳՆՈՂԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆԻ ԱՐԴԻԱԿԱՆԱՑՈՒՄ» ԾՐԱԳԻՐ

1.	Ծրագրի նպատակը	Հենաշարժական խնդիրներով հաշմանդամություն ունեցող անձանց համար կենտրոնի բոլոր հարկերով անարգել և անվտանգ տեղաշարժի ապահովման նպատակով վերելակի և ինքնագործարկվող գեներատորի ձեռքբերում և տեղադրում:
2.	Ծրագրի բարեգործական որակման նպատակը	Օգտվել Հայաստանի Հանրապետության հարկերի, տուրքերի, պարտադիր վճարների գծով օրենքով սահմանված արտոնություններից:
3.	Բարեգործը	Մերիյո հիմնադրամ (MÉRIEUX FOUNDATION) (հասցե՝ Ֆրանսիայի Հանրապետություն, 69002, քաղաք Լիոն, Բուրժելա փողոց 17)
4.	Ծրագիրը կատարողը	«Քերոլայն Քոքսի անվան վերականգնողական կենտրոն» հասարակական կազմակերպություն (Հայաստանի Հանրապետություն, Կոտայքի մարզ, քաղաք Եղվարդ, Նար Դոսի 44, ՀՎՀՀ՝ 01060736)
5.	Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը	Հայաստանի Հանրապետություն, Կոտայքի մարզ, քաղաք Եղվարդ, Նար Դոսի 44, բնագավառը՝ սոցիալական
6.	Ծրագրի բյուջեն	16,100,000 դրամ
7.	Բարեգործություն ստացողը	Հենաշարժական խնդիրներով հաշմանդամություն ունեցող անձինք
8.	Ծրագրի իրականացման տևողությունը	2026 թվականի օգոստոսի 20-ից մինչև 2026 թվականի դեկտեմբերի 31-ը
9.	Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը	Հենաշարժական խնդիրներով հաշմանդամություն ունեցող անձանց անարգել տեղաշարժի համար ձեռք բերել և տեղադրել վերելակ և գեներատոր, որը նախատեսվում է իրականացնել 2026 թվականի օգոստոսի 20-ից մինչև

		2026 թվականի դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակահատվածում՝ 16,100,000 դրամի չափով:
10.	Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը	1) մետաղական խցիկով վերելակի և շահագործման համար անհրաժեշտ պարագաների ձեռքբերում՝ 12,025,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի: 2) ինքնագործարկվող գեներատորի ձեռքբերում՝ 4,075,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:
11.	Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը	Չեն նախատեսվում:
12.	Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ	Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության և Եղվարդի համայնքապետարանի աշխատակազմ:
13.	Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը	Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի հունվարի 16-ի N 66-Ն որոշմամբ հաստատված բարեգործական ծրագրերը բարեգործական որակելու և գրանցելու կարգի 25-րդ կետով սահմանված կարգով կներկայացվեն տեղեկություններ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ Տ. ԽԱՉԱՏՐՅԱՆ

13.08.2026
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ